«Այբ» ավագ դպրոց

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ **2023 թ., ապրիլ**
Տևողություն՝ **1 ժամ 15 րոպե**
Հավելյալ նյութ՝ *Պատասխանների գրքույկ*

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Անհրաժեշտ է հետևել *Պատասխանների գրքույկի* կազմին գրված ցուցումներին:
Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:
Պետք է պատասխանել **բոլոր** հարցերին:
Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Յուրաքանչյուր հարցի հնարավոր առավելագույն միավորը նշված է հարցի վերջում՝ աջ կողմում:
Հարցերի միավորների ընդհանուր քանակը **32** է:

Այս փաստաթուղթը բաղկացած է **4** տպագիր էջից:

Առաջադրանք 1 Սիրելի՛ դիմորդ, ստորև ներկայացված տեքստը մի հատված է Ալեքսանդր Շիրվանզադեի «Արտիստը» պատմվածքից։ Ընթերցի՛ր այն և պատասխանի՛ր հարցերին։

Զվարճության տաք միջոցին դռների մեջ նկատվեց ինձ համար մի անծանոթ կերպարանք: Ոչ ոք առաջին պահ չնկատեց նրան, բացի ինձանից, որ նստած էի դռների մոտ: Անծանոթը հենց առաջին վայրկյանից գրավեց ուշադրությունս: Ես դիտեցի նրան: Մոտ 16-17 տարեկան մի պատանի էր, նիհար, գունատ դեմքով, կուրծքը փոքր-ինչ ներս ընկած: Հագած էր մուգ կապտագույն գոտևոր, կարճ բաճկոն, որի կուրծքը զարդարված էր ասրյա խաչաձև ծոպերով և նույն գույնի նեղ վարտիք: Ձեռքին բռնած էր մի կակուղ կանաչագույն գլխարկ՝ փետուրով զարդարված, նման այն գլխարկներին, որ դնում են թափառաշրջիկ հույն անդրիավաճառները կամ իտալացի երաժիշտները: Նրա դեմքի գծերը կանոնավոր էին ու նուրբ, աչքերն ունեին ինչ-որ մելամաղձիկ արտահայտություն: Դա այն երջանիկ դեմքերից էր, որոնք հենց առաջին հայացքով մարդու սրտում շարժում են համակրության զգացում:
—Բոն—ջուրնո,— ասաց նա, գլուխ տալով:
—Ոհո՜, արտի՜ստը,— գոչեց ամենքից առաջ բարիտոն Կավալլարոն, որ մի բարեսիրտ մարդ էր՝ մոտ երեսուն ու հինգ տարեկան:
—Արտի՜ստը, արտի՜ստը,— կրկնեցին մյուսները:
Նույն վայրկյանին պար, նվագ ու ծիծաղ ընդհատվեցին, և բոլոր հայացքները դարձան դեպի պատանին:
—Որտե՞ղ էիր, այսքան ժամանակ չէիր երևում,— հարցրեց Կավալլարոն:
—Սպասեցե՛ք, նա տխուր է,— գոչեց Լուիզան և մոտեցավ պատանուն,— էլի ի՞նչ է պատահել, ինչո՞ւ չես մտնում:
—Որտե՞ղ է սինյորա Ստեֆանիան,— հարցրեց պատանին:
Նրա ձայնը հուզված էր, դողում էր: Այդ ձայնի մեջ կար մի սրտաշարժ շեշտ, որ արտահայտում էր հեզության հետ և թախիծ:
—Աա՜, հասկացա,— ասաց Լուիզան,— էլի մայրդ երևի հիվանդ է: Խեղճ պատանի, դու սլանում ես երկինք, նա կպած է երկրին…
—Սինյորինա Լուիզա, ես ձեզ խնդրում եմ ինձ չխղճալ,— գոչեց պատանին վիրավորված,— Սինյորա Ստեֆանիան այստե՞ղ է:
—Մայրս խոհանոցումն է:
Պատանին գլուխ տվեց շնորհալի ձևով ու հեռացավ:

Հարց 1 Գրի՛ր, թե գրական որ մեթոդին է հետևել Շիրվանզադեն իր երկերում: Ինչպե՞ս կբնութագրես այդ մեթոդը (2 միավոր)։

Հարց 2 Ինչո՞ւ էին շրջապատի մարդիկ Լևոնին արտիստ անվանում (2 միավոր)։

Հարց 3 Ի՞նչ կապ ուներ «Մադրիդի շրջմոլիկ» երգը պատմվածքի հերոսի ճակատագրի հետ (2 միավոր)։

Հարց 4 Ինչո՞ւ Լևոնը ինքասպանություն գործեց։ Արդյոք համամի՞տ ես պատմվածքի այս վերջաբանին։ Դու ինչպիսի՞ լուծում կառաջարկեիր։ Շարադրի՛ր կարծիքդ հիմնավորումներով (5 միավոր)։

Հարց 5 Հատվածի համար գրի՛ր ամփոփում. քո բառերով շարադրի՛ր, թե ինչ է ասվում այդ հատվածում։ Ամփոփման մեջ ներառի՛ր նաև քո մեկնաբանությունը (5-6 նախադասություն) (5 միավոր)։

Առաջադրանք 2 Սիրելի՛ դիմորդ, ընթերցի՛ր Հովհաննես Թումանյանի «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը և պատասխանի՛ր հարցերին։

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԵՏ

Վաղուց թեև իմ հայացքը Անհայտին է ու հեռվում
Ու իմ սիրտը իմ մտքի հետ անհուններն է թափառում,
Բայց կարոտով ամեն անգամ երբ դառնում եմ դեպի քեզ՝
Մղկտում է սիրտս անվերջ քո թառանչից աղեկեզ,
Ու գաղթական զավակներիդ լուռ շարքերից ուժասպառ,
Ե՛վ գյուղերից, և՛ շեներից՝ տխո՛ւր, դատարկ ու խավար,
Զարկվա՛ծ հայրենիք,
Զրկվա՛ծ հայրենիք։

Խռնվում են մտքիս հանդեպ բանակները անհամար,
Տրորում են քո երեսը, քո դաշտերը ծաղկավառ,
Ու ջարդարար ռհմակների աղաղակով վայրենի,
Ավարներով, ավերներով, խընջույքներով արյունի,
Որ դարձրին քեզ մշտական սև ու սուգի մի հովիտ,
Խեղճ ու լալկան քո երգերով, հայացքներով անժպիտ,
Ողբի՛ հայրենիք,
Որբի՛ հայրենիք։

Բայց հին ու նոր քո վերքերով կանգնած ես դու կենդանի,
Կանգնած խոհո՛ւն, խորհրդավոր ճամփին նորի ու հընի.
Հառաչանքով սըրտի խորքից խոսք ես խոսում Աստծու հետ
Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում չարաղետ,
Խորհում ես դու էն մեծ խոսքը, որ պիտ ասես աշխարհքին
Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ձրգտում է մեր հոգին—
Հույսի՛ հայրենիք,
Լույսի՛ հայրենիք։

Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած,
Հազա՛ր-հազար լուսապայծառ հոգիներով ճառագած,
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,
Կենսաժըպիտ իր շողերը պիտի ժըպտան առաջին,
Ու պոետներ, որ չեն պըղծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով,
Իմ նո՛ր հայրենիք,
Հըզո՛ր հայրենիք…

Հարց 1 Նշի՛ր Հովհաննես Թումանյանի ծննդավայրը (1 միավոր)։

Հարց 2 Նշի՛ր, թե Թումանյանը երբ է հիմնադրել «Վերնատուն» գրական խմբակը, և ովքեր էին նրա մշտական անդամները (2 միավոր)։

Հարց 3 Ինչո՞ւ է Թումանյանը բանաստեղծությունը վերնագրել «Հայրենիքիս հետ»։ Պատմական ո՞ր ժամանակաշրջանում է գրվել բանաստեղծությունը (2 միավոր)։

Հարց 4 Բանաստեղծությունից դու՛րս գրիր երեք տարբեր պատկերավորման միջոցի օրինակ՝ դիմացը նշելով տեսակը (3 միավոր)։

Հարց 5 Ի՞նչ սկզբունքով է կառուցված «Հայրենիքիս հետ բանաստեղծությունը։ Մեկնաբանի՛ր բանաստեղծական տների կապակցման եղանակը (4 միավոր)։

Հարց 6 Բացատրի՛ր 1-ին եւ 4-րդ տների ավարտական տողերի («Զարկվա՜ծ հայրենիք, Զրկվա՜ծ հայրենիք» եւ «Իմ նո՜ր հայրենիք, Հըզո՜ր հայրենիք») կապը տվյալ բանաստեղծության համապատասխան տների բովանդակության հետ (4 միավոր)։